

**Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարերի
պատասխաններ
IX դասարան**

1. Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր բանավոր ստեղծագործությունը, որն սկիզբ է առնում վաղնջական ժամանակներից և հասնում մեր օրերը՝ իր մեջ ներառելով տվյալ ժամանակաշրջանի հավաքական մտածողությունն ու հավաքական հույզերը: Տարբեր ժողովուրդներ տարբեր անվանումներով են բնութագրել՝ ժողովրդական իմաստություն, ժողովրդական ճանաչողություն, գիտություն և այլն: XIX դարում անգլիացի գիտնական Վիլյամ Թոմսը շրջանառության մեջ դրեց folk-lore՝ ֆոլկլոր տերմինը, և այն դարձավ միջազգային ընդհանուր անվանում: Հայերենն ունի իր յուրահատուկ բնութագրությունը՝ բանավոր հյուսված-բանահյուսություն: Բանահյուսությունը կյանք է առել գյուղական անշուք խրճիթներում, հողի աշխատավորի կողմից. «Նրա ստեղծողը ժողովուրդն է, ժամանակով առաջին, ստեղծագործության գեղեցկությամբ ու հանճարեղությամբ, փիլիսոփան ու պոետը, որն ստեղծել է բոլոր մեծ պոեմները...», - հավաստել է Գորկին:

Վիպերգերը մեր բանահյուսության վաղ շրջանի ստեղծագործություններ են, որ ստեղծվել են առասպելներից ավելի ուշ, քանի որ նրանց դիպաշարերում առկա են պատմական անհերքելի փաստեր, որոնք, բնականաբար, պարուրված են ժամանակների խառնաշփոթով: Այդպիսին է «Տիգրան և Ածղահակ» վիպերգը, որի նյութը ընդգրկում է Ք. ա. 6-րդ դարի անցքերը, երբ թագավորում էր Տիգրան Երվանդյանը՝ Երվանդ Սակավակյացի որդին, բայց խոսքը ակնհայտորեն Տիգրան Մեծի մասին է, քանի որ խոսվում է նրա կատարած գործերի մասին: Ուրեմն՝ վիպերգը հյուսվել է Ք. ա. 1-ին դարում: Վիպական Տիգրանի հակառակորդ Ածղահակն էլ ունի նախատիպ. մարաց թագավոր Աստիագետը, որի օրոք Տիգրան Երվանդյանը, աջակցելով պարսից Կյուրոս թագավորի, տապալում է մարաց թագավորությունը: Վիպերգում առկա են նաև առասպելական հիմքեր՝ Ածղահակը՝ երեքգլխանի ամպրոպային վիշապի հետնորդն է, Տիգրանը՝ առասպելական Վահագնի: Ածղահակը, ըստ առասպելի, չարի մարմնացումն է, իսկ Տիգրանը՝ բարու, այսինքն՝ վիպերգում ոչ միայն արքաների պատերազմն է, այլև չարի և բարու: Վիպերգի դիպաշարը պարզ է. Ածղահակը վախենում է Տիգրանից և փորձում է խաբեբայությամբ սպանել նրան: Այդ վախը սաստկանում է հատկապես Տիգրանի և Կյուրոսի միջև կնքված դաշինքից հետո, և նա խոհրդականներից պահանջում է առաջարկել որևէ խելամիտ լուծում՝ «բազմաբյուրավոր հայից» զգուշանալու համար: Որոշվում է, որ Ածղահակը պետք է կնության առնի Տիգրանուհուն: Բայց այս ամուսնությունն էլ չի փրկում Ածղահակին, քանի որ «խելամիտ գեղեցկուհին» չի հավատում խորամանկ մարացուն և նրա մտադրության մասին տեղեկացնում է եղբորը: Պատերազմում սպանվում է Ածղահակը. «Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ

պարշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից իրեն հավասարը չունեցող: Կովի ժամանակ Աժդահակի երկաթե ամուր զրահը ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է նիզակի ընդարձակ տեգին, և ձեռքը հետ քաշելիս՝ նրա թոքերի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում»: Ահա մի հրաշալի նկարագրություն, որ վեր է ամեն հերոսականից: Այս պատմությունը անթերի բնութագրում է նրան իբրև վիշապներ ու առյուծներ սանձող քաջի, իբրև շեշտասլաց արծվի և «սքանչելի դյուցազնի»: Երազի նկարագրությունից անգամ երևում է Աժդահակի վախկոտությունն ու սարսափը, որ նա կրում է Տիգրանից: Տիգրանուհին՝ հայոց արքայաքույրը, իր քաջուէյամբ, խելքով, համարձակությամբ ոչնչով չի զիջում տղամարդկանց: Նա արհամարհում է Աժդահակի սպառնալիքը, թե «խայտառակ կործանում է սպասվում», եթե չկատարի իր կամքը: Տիգրանուհուն վիպերգուները գովերգում են հենց այն բանի համար, որ նա՝ «գեղեցկագույնն ու խոհեմը կանանց մեջ», կարողանում է կեղծիքը տարբերել ճշմարտությունից, սերը՝ ատելությունից, բարեկամությունը՝ չարակամությունից և, ճիշտ կողմնորոշվելով, ապահովում եղբոր անվտանգությունն ու հաղթանակը: Նա մեր առաջին վիպական հերոսուհին է, կնոջ խորագետ ու շրջահայաց կերպար: Տիգրանուհու նման են վարվել Տիգրան Մեծի կինը՝ Ջարուհին, Տրդատ Մեծի կինը՝ Աշխեն թագուհին, Արշակ Երկրորդի կինը՝ Փառանձեմը, Մամիկոնեից Մեծ տիկինը, Վարդան Մամիկոնյանի կինն ու դուստրը՝ Շուշանիկը և բազում այլ նվիրյալք:

2. Մուրացանը հայ գրականության մեծագույն ժառանգորդն ու հրաշալի պատմողն է: Նրա ստեղծագործությունները մի նշանախեց անգամ չի պակասել մինչև մեր ժամանակները և հաստատապես չի պակասելու նաև հետագայում, քանի որ բացահայտել է մարդկային հոգու գաղտնարանները՝ զարմանալի նրբությամբ ու վարպետությամբ: Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) ծնվել է Շուշիում, չքավոր ընտանիքում: Ունեցել է ծանր մանկություն, բայց եղել է առաջադեմ ու սիրված աշակերտ: Եղել է անսահման հանդուրժող ու բարի, պատրաստակամ ու հնարամիտ, որի համար էլ պապը նրան անվանել է «Մուրատատու խաչ»: Գրական կեղծանուն է դարձրել պատմական Մուրացյան տոհմի անունը: 1881-ին Մուրացանը գրում է իր միակ դրամատիկական երկը՝ «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» պատմական դրաման, որը առաջին անգամ բեմադրվում է Թիֆլիսում՝ Պետրոս Ադամյանի և դերասանուհի Հրաչյայի մասնակցությամբ: Այն ունենում է աննախադեպ հաջողություն. Թիֆլիսի հարուստները այնքան են ոգևորվում, որ խոստանում են հեղինակին ուղարկել արտասահման՝ ուսանելու: Սակայն նրանք շատ արագ մոռանում են խոստումները, և Մուրացանը, դառն հուսահատության մեջ, շարունակում է հաշվապահի տաղտկալի աշխատանքը: Հենց այս միջադեպն էլ դառնում է «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի նյութը, իսկ հեղինակը՝ նախատիպը: Պատմվածքը գրվել է 1884-ին. չափազանց տխուր ու ազդեցիկ է գլխավոր հերոսի վախճանը, շնորհաշատ միամիտ պատանին հավատում է հարուստների խոստումներին՝ հեռանալով աշխատանքից, չհասկանալով գեղեցիկ ու հարուստ գերմանուհու անկեղծ հիացումը, մերժելով բոլոր առաջարկները:

Հիասթափված պատանուն ոչինչ չէր մնում, քան մտածել ինքնասպան լինելու մասին: Նա ցանկանում է նետվել Քուռը, բայց վերջին պահին մտաբերում է անօգնական մորը, որի թախանձանքները՝ հեռու մնալ հարուստներից ու կրկին դիմել Գուստավին՝ վերականգնվելու նախկին աշխատանքում, մնացել էին մերժված: Ուժասպառ մայրը նորից է անցնում լվացարարուհու հոգնամաշ աշխատանքին՝ ավելի ցածր վարձավճարով: Մուրացանը դատապարտում է քաղքենի աշխարհի անտարբերությունն ու անսիրտ վերաբերմունքը ցածր խավի նկատմամբ: Գևորգի ճակատագիրը հարևանն է այն մարդկանց ճակատագրին, որոնք միամիտ հավատով տրվում են ուրիշների խոստումներին՝ չկարողանալով գնահատել դառն իրականությունը: Մուրացանը ավելի շատ մեղադրում է քաղքենի «Բարձրաշխահիկ» հասարակության բարքերը, քան միամիտ պատանուն: Մնացյալը՝ աշակերտը:

3. Դերենիկ Դեմիրճյանը հայ գրականություն մտավ հանդարտ ու հաստատակամ՝ նման միայն ինքն իրեն: Նա կյանքում էլ այդպիսինն էր. երբեք չէր շտապում և երբեք չէր ուշանում: Դեմիրճյանն ունեցել է ծանր մանկություն, բայց միշտ եղել է կենսասեր ու հավատավոր, հավատացել է ազնիվ մարդու հաղթանակին: Տեսել է ամենասարսափելին՝ ցեղասպանությունը, ճաշակել է իր ժողովրդի դառնության համր: Ցեղասպանության զարհուրելի տարիների ողբերգությանը Դեմիրճյանն անդրադարձավ «Ավելորդը» պատմվածքով: Պատմվածքում ողբերգության նախընթաց օրերի պատկերն է. մենք ողբերգությունն զգում ենք, երբ ռուսական բանակը նորից գրավում է քաղաքը և պարզվում է, որ Ավելորդը՝ Մբունը անհետ կորել է: Ավետիք Իսահակյանը այսպես է բնութագրել Դեմիրճյան գրողին. «Նա հոգեբանական անալիզի վարպետ է, ունի դիտող սուր աչք, թափանցող միտք»: Միանգամայն իրավացի է Վարպետը, քանզի Դեմիրճյանը ընդամենը մի քան նախադասությամբ ներկայացնում է հրաշալի մարդուն՝ անդամալուիյծ Մբունին, որին վաճառական եղբայրը ավելորդ է համարում՝ իր ունեցվածքը գերադասելով մարդուց: Նա առ ոչինչ է համարում կնոջ թախանձանքը, տղաների ու հարսների խնդրանք-առաջարկը, թոռների աղիողորմ լացը. մի կերպ գտած սայլի վրա տեղավորվում են իրենք ու իրենցից թանկ ունեցվածքը: Իսկ եղբորը անսահման սիրող անդամալույծը վերջին պահին օրհնում է նրանց ճանապարհը՝ եղբորը տալով իր գործած բրոյա ձեռնոցները: Զոհաբերելով հարազատ քրոջը՝ Հաջի աղան փրկում է իր ունեցվածքը: Բարոյապես մեռած է Հաջի աղան, նրա երակներում արյունը սառույց է կտրել, նա խենթացել է ունեցվածքը կորցնելու ահից: Բայց «հոգեբանական անալիզի վարպետը» ոչինչ ասած չէր լինի, եթե Հաջի աղան չանցներ ապաշխարանքի այրող քուրայով: Այս դաժան ու անսիրտ մարդու մեջ հանկարծ արթնանում է տանջող խիղճը. «Աստծու առաջ հոգին հոգի է, ավելորդ մարդ չկա»: Նա հրաժարվում է հարստությունից, որպեսզի վերադառնա դեպի մարդը: Բայց նրա ապաշխարանքը մարդկային էության հետևանք չէր, այլ ողորմելի հոգին Աստծու դատաստանից փրկելու հուսահատ ճիչ:

4. Միքայել Նալբանդյանը մեր գրականության հավերժի ճամփորդն է՝ խիզախորեն առաջ պարզած ազատության դրոշով ու իր անմոռաց դասերով: Նրա մասին խոսել են հայ և օտարազգի մեծերը, գնահատել են նրա անհավանական խիզախությունը, որովհետև՝ Մեզնից շատ էր սիրում նա գարունն ու վարդը

Եվ մեզանից ավելի բանաստեղծ ու մարդ էր,

Բայց դարը դաժան էր, ու ցարը՝ ոխերիմ

Եվ նա սուր վերցրեց գրչի փոխարեն...

Նալբանդյանի բանաստեղծություններում այսօր էլ հնչում են ազատության խրոխտ կանչը և **պատգամը ապագա սերունդներին՝ մեզ**, որ նրա դասերի լավագույն կրողները պիտի լինենք: Իր ողջ կյանքը ազատության երգիչը նվիրեց իր և բոլոր ժողովուրդների ազատության ու բարեկեցության խնդրին: «Հյուսիսափայլի» էջերում փայլատակեց Նալբանդյանի անգուգական տաղանդը. Կոմս Էմմանուելը դարձավ բոլորի սիրելին, քանի որ արտահայտում էր **լուսավորության, ազատության ու հայրենասիրության գաղափարներ**: 1858-ին տպագրված «Ազատություն» բանաստեղծության մեջ հրովարտակային ճշմարտությամբ հնչում է ազատության գաղափարը. **Ազատն Աստված այն օրից, երբ հաճեցավ շունչ փչել.....** Ես այն օրից ուխտեցի ազատությունը սիրել. բանաստեղծի այս անխախտ ուխտը դարձավ նրա կյանքի իմաստը. մանկության երազ օրերի անցնելուց հետո նա հասկացավ, որ **սուր է հարկավոր կտրիճի ձեռքին** և բոլորին ոգեկոչեց ազատության ու լուսավորության: Նա դարձավ մեծ լուսավորչի գաղափարների կրողն ու սերմանողը մեր գրականության մեջ՝ իր ապրած կյանքով դաստիարակելով կամք ու արժանապատվություն: Նալբանդյանին լավագույնս գնահատել է մեծն Դեմիրճյանը. «Նալբանդյանը 19-րդ դարի 60-ական թվականների որոտն է ու կայծակը, զարնանաբեր ամպրոպը: Հայկական մրրկահավը լիակուրծք հրավեր կարդաց կովի ու ալեկոծության, բերեց փոթորիկ ու մաքրեց հասարակական կյանքի օդը»: Հարկ է նկատել, որ ռուս գրականության մրրկահավը՝ Մաքսիմ Գորկին նույնն արեց 1900- ականներին: Որոնք են Նալբանդյանի դասերը. Կարդալով մեծ ազատասերին ու բարենորոգիչ- հեղափոխականի ստեղծագործությունը, մենք համակվում ենք ազգային արժանապատվության ու արժանապատիվ ապրելու անբեկանների գաղափարով: Իր ապրած կյանքով Նալբանդյանը իրավունք ուներ արձանագրելու. « Ես ազգով հայ եմ, անձով նահատակ», քանզի նրա գաղափարները միայն իր ազգի համար չեն. նա այրվում է բոլոր տառապյալների համար: Լինելով մեծ լուսավորչի երկրպագուն և նրա գործի շարունակողը՝ Նալբանդյանը նույնպես մեզ է ավանդում իր անսահման լեզվափմացությունն ու լեզվասիրությունը. «Պահի՛ր քո լեզուն, որ է՝ քո ազգության դրոշը»: «Լեզուն է ազգության դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը», «Լուսավորությունը. ահա մարդու խորհուրդը», պատգամելով սիրել ու փայփայել մեր հրաշք լեզուն, նա միաժամանակ նշում էր, որ լեզուն քարացած երևույթ չէ, որ «Մտքի զգեստը, որ լեզուն է, այդքան դարավոր ժամանակների մեջ պիտո է փոփոխված լինի. լեզու ենք ասում, որ մի կենդանի, հոսանուտ բան լինելով, համարյա թե ամենայն փոփոխության և ներգործության տակ է»:

**Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարերի
պատասխանների գնահատման չափանիշներ
IX դասարան**

- | | |
|----------|---|
| 1. հարց` | Ենթահարցեր` 1 – 1 մ., 2 – 2 մ., 3 – 1 մ, 4 – 1 մ. |
| 2. հարց` | Ենթահարցեր` 1 - 1 մ., 2 – 1 մ., 3 – 1 մ., 4 – 2 մ. |
| 3. հարց` | Ենթահարցեր` 1 - 1 մ., 2 – 2 մ., 3 – 1 մ. , 4 - 1 մ. |
| 4. հարց` | Ենթահարցեր` 1 - 3 մ., 2 – 2 մ. |

Հանրապետական հանձնաժողովի նախագահ` Ս. Աբազյան